

## **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՆԹԱԿԱ – ՍՏՈՐՈԳՅԱԼ – ԽՆԴՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **ՀԱՍՄԻԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ**

Ժամանակակից լեզվաբանության մեջ ենթակայի (S), բայ-ստորոգյալի (V) և ուղիղ խնդրի (O) շարադասական փոխհարաբերությունը համարվում է տիպաբանորեն համեմատաբար կայուն, և առաջարկվում է դրանց շարադասական փոխհարաբերության հնարավոր վեց տիպ՝ SVO, SOV, VSO, VOS, OSV, OVS:

Յարկ է նշել, որ շարադասությունը ավելի լայն է և ընդգրկում, քան շարադասական փոխհարաբերության նշված տիպերը: Բայց տիպաբանական տեսակետից սրանք ավելի կարևոր են և ուշադրության արժանի, որովհետև աշխարհի շատ լեզուների պարզ նախադասությունների շարադասությունը ուսումնասիրվել է նշված շարադասական կաղապարները հիմք ընդունելով<sup>1</sup>: Մասնավորապես, բազմաթիվ լեզուների համար պարզվել են շարադասական առավել բնորոշ կաղապարները ըստ հետևյալ առյուսակի:

### **Աղյուսակ 1**

		Լեզուների քանակը	Լեզուներ
1.	SOV	180	ճապոներեն, կորեերեն, հնդկական խմբի որոշ լեզուներ, տիբեթա-բիրմանական խմբին պատկանող որոշ լեզուներ
2.	SVO	168	անգլերեն, վիետնամերեն, բանտու խմբին պատկանող լեզուներ (Կենտրոնական Աֆրիկա), բուշմեներեն (Աֆրիկա), իրոկեզական լեզու (հնդկական լեզուների խմբից)
3.	VSO	37	Բերբերյան ճյուղին պատկանող լիվիերենը
4.	VOS	12	Երեք լեզու ամազոնական տարածքից, Խաղաղ օվկիանոսի արևմտյան շրջանի լեզուներ, Մադագասկարի որոշ լեզուներ
5.	OVS	5	Կարիբյան և ամազոնական տարածքի որոշ լեզուներ
6.	OSV	-	-

Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասության համառոտ բնութագիրը տալու համար օգտվել ենք Զ. Գրինբերգի առաջարկած մեթոդից, որը կրում է «Բառերի հիմնական կարգի (հաջորդակա-

<sup>1</sup> Струкач Н. Б. Общее языкознание. Структурная и социальная типология языков. М., 2006, кг 90:

նության) տիպաբանություն» անվանումը<sup>2</sup>: Զ. Գրինբերգը առաջարկում է ընդհանրությունը, որոնք հիմնված են երեք հատկանիշի վրա:

Առաջին հատկանիշը բացահայտում է բառերի հիմնական շարադասությունը: Ենթական նշանակելով S (subjectum), բայց՝ V (verbum), իսկ խնդիրը O (objecatum)` Գրինբերգը 30 լեզուների ուսումնասիրությունից ստացված տվյալների հիմնան վրա եզրակացնում է, որ օգտագործվում են բառերի դասավորության հիմնական երեք ձև՝ **VSO, SVO, SOV**:

Այստեղ խոսքը հիմնական ձևերի մասին է, հակառակ դեպքում այնպիսի չփոխառվող ձև, ինչպիսին է OVS, կարելի է հանդիպել նույն լեզուներում, այդ թվում նաև՝ ռուսերենում, օր.`

#### *Մասնաւորության (OVS)*

Երկրորդ հատկանիշը բացահայտում է լեզուների մեջ սպասարկութառությունը (նախադրություններ և հետադրություններ), որը Զ. Գրինբերգը համապատասխանաբար նշանակում է Pr (preposition) և Po (postposition):

Երկրորդ հատկանիշով բացահայտվում է ածականների դիրքը գոյականի նկատմամբ: Գոյականից առաջ դրվող ածականը Գրինբերգը նշանակում է A տառով, իսկ գոյականից հետո դրվող ածականը՝ N տառով<sup>3</sup>:

Տեղին է նշել, որ վերոհիշյալ վեց տիպերից վերջին երեքը խիստ հազվադեպ են: Առաջին երեքի (**SVO, SOV, VSO**) ընդհանրությունն այն է, որ երեք կաղապարներում էլ լրացումը հաջորդում է ենթակային: Սա հիմք է դառնում գրինբերգյան առաջին ընդհանրությի համար. պատմողական նախադասություններում լրացումը միշտ շարադասվում է ենթակայից հետո, որի հիմնան վրա էլ առանձնացվում են շարադասական հետևյալ երեք կաղապարները՝ **SVO, SOV, VSO**: Պայմանավորված բայի դիրքով՝ Գրինբերգը սրանք անվանում է առաջին (VSO), երկրորդ (SVO) և երրորդ (SOV):

Առաջին հատկանիշով լեզուների դասակարգման երեք տարբեր խմբերի հնարավորություն է ստեղծվում, իսկ վերջին երկու հատկանիշով՝ լրացուցիչ երկուական խմբերի ևս: Զ. Գրինբերգի դասակարգման այլուսակը ստանում է 12 վանդակ: Նշենք, որ հնարավոր ոչ բոլոր ձևերն են իրացվում, օրինակ՝ VSO գլխավոր հաջորդականության Po – A, Po – N վանդակները դատարկ են մնում, քանի որ համապատասխան շարադասություն ունեցող ոչ մի լեզու Զ. Գրինբերգին հայտնի չէ:

Գրինբերգյան դասակարգման այլուսակը ունի հետևյալ տեսքը.

#### *Աղյուսակ 2*

	I VSO	II SVO	III SOV
P <sub>O</sub> – A	0	1	6
P <sub>O</sub> – N	0	2	5
Pr – A	4	0	4
Pr – N	6	6	0

<sup>2</sup> Տե՛ս Ստեփանով ՅՕ. Основы языкоznания. М., 1963, էջ 139:

<sup>3</sup> Տե՛ս Joseph H. Greenberg, Some Universals of Grammar with Reference to the Order of Meaningful Elements, In: Joseph Greenberg (ed). Universals of language. London, էջ 73-75:

Ժամանակակից հայերենի դիրքը վերոհիշյալ աղյուսակում որոշելու համար նախ պետք է պարզել բառերի հիմնական շարադասությունը պարզ նախադասություններում: Ժամանակակից հայերենում (նաև գրաբարում) ընդունված է, որ ենթական դրվում է ստորոգյալից առաջ (SV), իսկ եթե ենթական ունի որոշիչ, հատկացուցիչ լրացումներ, ուրեմն՝ դրանցից հետո: Որպես հիմնական կիրառություն կարելի է տալ ժամանակակից հայերենի շարադասության կառուցվածքը բնութագրող այն գիծը, որի համաձայն որոշիչները և հատկացուցիչները իրենց լրացյալների նկատմամբ հիմնականում ունեն նախադաս շարադասություն, խնդիրները՝ հետադաս շարադասություն, իսկ պարագաների մեջ մասին բնորոշ է նախադաս գործածությունը: Արդի հայերենը հարուստ է հետադրություններով՝ ի տարրերություն գրաբարի, որտեղ գերակշռում են նախդիրները: Ըստ այս ընդհանուր կաղապարի՝ ժամանակակից հայերենը մտնում է **SOV P<sub>O</sub> – A** խմբի մեջ: Մինչդեռ դասական գրաբարի շարադասության համակարգը մտնում է **SVO Pr – N** խմբի մեջ, քանի որ գրաբարում որոշիչները, հատկացուցիչները, ինչպես նաև կապի խնդիրները ունեն հիմնականում հետադաս շարադասություն:

Ստորև տրվում է Զ. Գրինբերգի առաջարկած տիպաբանական դասակարգման ընդհանուր աղյուսակը, համապատասխան վանդակների մեջ ներառելով նաև դասական գրաբարը և ժամանակակից հայերենը<sup>4</sup>:

### Աղյուսակ 3

I VSO	II SVO	III SOV
P <sub>O</sub> – A	Էստոներեն, չինարեն, արդի հայերեն	հինդի, տիբեթական լեզուներ, արդի հայերեն, բենգալի
P <sub>O</sub> – N	աֆրիկյան մի շարք լեզուներ	շումերերեն, ավստրալիական լեզուներ, դասական տիբեթերեն
Pr – A նաուհարլը և մի քանի այլ լեզուներ	անգլերեն, գերմաներեն, ռուսերեն	
Pr – N եբրայերեն, ապարերեն	գրաբար, ֆրանսերեն, իսպաներեն	պարսկերեն, ակադերեն

Ըստ Զ. Գրինբերգի աղյուսակի՝ արդի հայերենը ընդհանրություններ ունի տիբեթական լեզուների, հինդիի և բենգալիի, իսկ դասական գրաբարը՝ ֆրանսերենի, իսպաներենի, ինչպես նաև ռոմանական այլ լեզուների հետ:

Պարզ նախադասության շարադասական կաղապարները որոշելու տեսակետից կարևոր չեն բայական անդամի լրացումը խնդիր է, թե պարագա, ուստի բայական անդամի լրացումը կնշանակենք Օ տառով՝ հետևելով պարզ նախադասության շարադասական կաղապարների ներկայացման ընդհանուր լեզվաբանական չափանիշներին:

<sup>4</sup> Տե՛ս Ստեփանօվ ՅՈ., նշվ. աշխ., էջ 141:

Ստորև կփորձենք տալ ժամանակակից հայերենի հնարավոր շարադասական կաղապարները ըստ վերոհիշյալ 6 տիպերի:

Ժամանակակից հայերենում ամենահաճախականը **SVO** կաղապարն է:

Սովորական շարադասության համաձայն՝ Ենթական լինում է նախադաս, իսկ ստորոգյալը՝ վերջադաս: Շրջուն շարադասության դեպքում Ենթական վերջադաս է, իսկ ստորոգյալը՝ նախադաս: Շրջուն շարադասությունը նպաստում է խոսքին նոր նորերանգներ հաղորդելուն:

«Հակառակ սովորական շարադասությանը, շրջունը հաճախ այնպիսի իմաստային և ոճական նրբություններ է հայտնաբերում նախադասության մեջ, որ սովորական շարադասությամբ բնավ չի զգացվում»<sup>5</sup>:

Գոյականով, ածականով, թվականով, դերանվամբ, դերբայով արտահայտված Ենթակաները ուղղի կամ սովորական շարադասության դեպքում դրվում են ստորոգյալից առաջ հատկապես այն դեպքերում, երբ խոսքի ելակետը Ենթական է: Օրինակ՝

*Աղջիկը մոտեցավ անձայն:*

*Գեղջիկը հրապուրում է բոլորին:*

*Առաջինը պարտվեց երրորդին:*

*Նա կռահեց եղելությունը:*

*Ընթրցողը հեռու կգնա գիտության ասպարեզում:*

Եթե Ենթական ունի լրացումներ՝ որոշիչ և հատկացուցիչ, ապա նշված լրացումները շարադասվում են նրանից առաջ: Օրինակ՝

*Օրիորդի գեղեցիկ դեմքը գրավեց բոլորի ուշադրությունը:*

Առանձին ուշադրության է արժանի անորոշ դերբայով արտահայտված Ենթական, որը հիմնականում ստորոգյալից առաջ է դրվում: Օրինակ՝

*Հաստ ուժելը վճասակար է առողջությանը:*

Նման դեպքերում Ենթական կարող է նաև հետադաս շարադասություն ունենալ, քանի որ Ենթակայի դերում համդես եկած անորոշ դերբայը որոշյալ առօւնով է գործածված: Ենթակայի դերում համդես եկած անորոշ դերբայը կարող է գործածվել նաև առանց հոդի: Նման դեպքում Ենթակայի նախադաս գործածությունը պարտադիր է դառնում, որովհետև եթե այն ստորոգյալից հետո շարադասվի, շատ դեպքերում կդառնա ստորոգյալի մաս: Օրինակ՝

*Յանդուգն երիտասարդին համոզել ամհնար է:*

Նշված օրինակում Ենթական **համոզել** բառն է:

*Յանդուգն երիտասարդին ամհնար է համոզել:*

Վերջին օրինակում նշված դերբայն արդեն դարձել է ստորոգյալի մի մաս:

Դերանուններով արտահայտված Ենթակաները հիմնականում նախադաս գործածություն ունեն: Բայց հարկ է նշել, որ, ի տարբերություն այլ դերանուններով արտահայտված Ենթակաների, որոնք կարող են նաև հետադաս գործածություն ունենալ, հարցական և հարաբերական դերանուններով արտահայտված Ենթակաները բացառապես նախադաս գործածություն ունեն, ինչպես՝

*Ի՞նչը ստիհակեց նրան հեռանալ:*

*Ովքեր չեն եղել Յայսստանում, քիչ բան կիմանան մեր մշակույթի մասին:*

<sup>5</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, Յայերենի շարահյուսություն, հ. 1, Եր., 1958, էջ 459:

Շարադասական երկրորդ կաղապարը **SOV**-ն է, որտեղ ենթական ստորոգյալից առաջ է հանդես գալիս, բայց նրանք ընդմիջարկվում են ստորոգյալի լրացումներով: Նման դեպքերում շեշտը կարող է լինել ենթակայի վրա: Օրինակ՝

*Մեղմ զեխյուռը, շոյելով ծաղիկները, աստիճանաբար անտառի խորքն էր քաշվում:*

Ուղիղ խնդիրը ստորոգյալից առաջ է շարադասվում այն ժամանակ, երբ առանձնապես շեշտված է: Նման գործածությունը հատուկ է հիմնականում գեղարվեստական գրականությանը, ինչպես՝

*Եսքեզ եմ սիրում:*

Անուղղակի խնդիրների մեջ ստորոգյալի նկատմամբ նախադաս դիրք ունի անջատման խնդիրը: Ինչպես գիտենք, անջատման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում է գործողությունը, կամ անջատվում է մի բան: Այդ պատճառով անջատման գաղափարը նախ կապվում է առարկայի հետ. մեր մտքում սկզբում ծագում է այդ առարկայի, ապա նոր՝ նրա հետ կատարվող գործողության գաղափարը, ինչպես՝

*Աղջիկը մորից էր ժառանգել այդ տունը:*

*Բանաստեղծը հայրենիքից հեռացավ:*

Եթե պարզ նախադասության ստորոգյալը ունի միաժամանակ և տեղի, և ժամանակի պարագաներ, ապա մեկը կարող է շարադասվել ստորոգյալից առաջ, իսկ մյուսը՝ հետո: Օրինակ՝

*Դանգատացողները ամեն օր գնում էին ամտառ գրունելու:*

Զետեղ պարագան նույնպես կարող է գործածվել ստորոգյալից առաջ, ինչպես՝

*Զրոսաշրջիկները գոհումակությամբ հեռացան Դայաստանից:*

Պատճառի պարագան կարող է հանդես գալ ենթակայի և ստորոգյալի միջև: Օրինակ՝

*Աղջիկը հուզմունքից շիկնեց:*

Շարադասական երրորդ կաղապարը **VSO**-ն է, որտեղ ենթական ստորոգյալից հետո է դրվում: Ստորոգյալի նախադաս գործածությունը խոսքին հաղորդում է հանդիսավորություն, շեշտում է գործողության կարևորությունը: Օրինակ՝

*Ժամանում են տաղանդավոր դերասանները թատրոնի շենք:*

Ստորոգյալի նախադաս շարադասությունը շատ է հանդիպում հիմնականում բնության նկարագրություններում՝ խոսքն ավելի տպավորիչ դարձնելու համար, ինչպես՝

*Գեղեցիկ է Սևանը երեկոյան:*

Ժողովրդական ստեղծագործություններում՝ լեզենդներում, բալլադներում, հեքիաթներում, գրույցներում ևս ենթական հանդես է գալիս ստորոգյալից հետո: Պատահական չէ, որ հեքիաթները հիմնականում սկսվում են լինում է, չի լինում բայերով:

Ստորոգյալի նախադաս շարադասությունը հատուկ է նաև թատերական երկի հեղինակային նշագրերին:

**VSO** կաղապարով կազմված պարզ նախադասություններում ստորոգյալի հետադաս լրացումներ կարող են լինել՝ ուղիղ խնդիրը, անուղղակի խնդիրները, նպատակի, տեղի, ժամանակի, պատճառի, ձևի պարագանե-

ո՛ը, օրինակ՝

*Սոռացավ երիտասարդը իր ընտանիքին:*

*Չէմ վախենում ազատանարտիկաները ոչ գենքից, ոչ մահից:*

*Յայտարարում էր բանաստեղծը ի լուր աշխարհի:*

*Մեկնում էր նա արտասահման:*

*Պիտի վերադառնար տաճտերը շուտով:*

*Տանջպում էր նա գլխացավից:*

*Յավաքվեցին հարևանները՝ բարձրածայն խոսելով:*

**VOS** կաղապարով կազմված նախադասությունները ունեն շրջուն շարադասություն, որի ժամանակ ստորոգյալն իր վրա է կրուն տրամաբանական շեշտը՝ խոսքը դարձնելով ավելի արտահայտիչ:

Նշենք, որ ժամանակակից հայերենում նախադասության նման կառուցվածքն այնքան էլ կենսունակ չէ: Նման կաղապարով կազմվող նախադասությունները հազվադեպ են և ավելի հատուկ են բանաստեղծական խոսքին:

Ստորոգյալի և ենթակայի միջև կարող է հանդես գալ ուղիղ խնդիրը:

Օրինակ՝

*Ընթերցում էր վեպը աղջիկը:*

Ստորոգյալի և ենթակայի միջև կարող են դրվել նաև անուղղակի խնդիրները և պարագաները, ինչպես՝

*Բարձր տրամադրությամբ հեռացավ նրանից իր մանկության ընկերը:*

*Պատմում էր իր երիտասարդ օրերի մասին տիսուր ծերունին:*

*Վազում էր ոտարորիկ փոքրիկ տղան:*

*Իջնում էր ամրոցից սպարապետի թիկնազորը:*

*Յավաքում էին խորհրդակցելու երկրի իշխանները:*

**OSV** կաղապարով կազմված նախադասություններում ուժեղանում է նախադասության անդամների տրամաբանական կապը:

Ստորոգյալի նկատմամբ նախադաս շարադասություն ունեն ինչպես ուղիղ, այնպես էլ անուղղակի խնդիրները, օրինակ՝

*Իր բնօրրանը սիրում էր նա անսահման:*

*Արդարություն փնտրեց նա իր ամբողջ կյանքում:*

*Օրորոցային էր երգում նայրն իր փոքրիկին:*

*Ճանապարհին նրան հանդիպեց համագյուղացին:*

*Բախտի հարվածներին դիմակայել էր նա:*

Եթե նախադասության մեջ կան ծեփ և այլ պարագաներ, սովորաբար անմիջապես ստորոգյալին նախորդում է ծեփ պարագան, այսպես՝

*Երեկոյան անհամբեր սպասում էինք մենք ընկերներին:*

Տեղի, նպատակի և պատճառի պարագաները ևս կարող են շարադասվել ստորոգյալից առաջ, օրինակ՝

*Անտարի ծայրամասում գտնվում էր տնակը:*

*Միջոցառմանը մասնակցելու համար ժամանեցին հյուրերը:*

*Ուրախությունից լրիվ կերպարանափոխվել էր աղջիկը:*

Ժամանակակից հայերենում պարզ նախադասությունը կարող է ունենալ նաև **OSV** կաղապար:

Ինչպես ուղիղ խնդիրը, այնպես էլ անուղղակի խնդիրները կարող են շարադասվել ենթակայից առաջ, օրինակ՝

*Բազմահարկ շինությունը օտարազգի շինարարներն էին վերանորոգում:  
Երիտասարդին մայրը փարվեց:*

*Գորից մի էջ նա պոկեց:*

*Մարմնամարզությամբ իր առողջությունը աղջիկը վերականգնեց:*

*Կիզիչ արևից ժայռերը կարծես բոցավառվել էին:*

*Չնի պարագան նույնպես կարող է ենթակայից առաջ շարադասվել,  
ինչպես՝*

*Յետզիետե գյուղը զարթնում էր:*

*Երազի նման անցյալը արթնացավ ծեր կնոք հիշողություններում:*

*Արդի հայերենում բավական տարածում ունի նաև տեղի և ժամանակի  
պարագաների նախադաս կիրառությունը, ինչպես՝*

*Եվրոպայից նրանք վերադարձան:*

*Դրսում ողը շատ սառն էր:*

*Ծուտով պարապմունքները կսկսվեն:*

*Բայական անդամի որոշ լրացումներ, վերաբերության անուղղակի  
խնդիրը, չափի և ձևի պարագաները ստորոգյալից և ենթակայից առաջ են  
շարադասվում այն դեպքերում, երբ դրանք հատուկ շեշտադրում են ունե-  
նում, ինչպես՝*

*Մեր իին ընկերներին նա տեսավ:*

*Մշակույթի մասին օտարներն էին պատմում:*

*Ընտանիքին ճանապարհելու համար նա եկել էր օդանավակայան:*

*Այսպիսով, վերջ ասվածից տեսնում ենք, որ արդի հայերենում որոշա-  
կի չափով իրացվում են շարադասական բոլոր կաղապարները: Սակայն  
դա չի նշանակում, որ ժամանակակից հայերենի շարադասությունը բա-  
ցարձակ ազատ է: Նշված վեց կաղապարներից արդի հայերենի համար ա-  
մենաշատ հանդիպող ձևերն են **SOV** և **SVO** տիպերը, որոնց դեպքում առ-  
կա է ուղիղ շարադասություն: Մնացած չորս տիպերը, կարող ենք ասել,  
վերաբերում են շրջուն շարադասությանը, երբ նախադասության տրամա-  
բանական շեշտը ընկնում է ոչ թե գործողությունը կատարողի, այլ հենց  
գործողության կամ լրացման վրա: Շրջուն շարադասությունը հատուկ է  
գեղարվեստական խոսքին և ոճական արժեք ունի:*

**АСМИК САМСОНЯН – Типологическая характеристика порядка слов (подлежащее-сказуемое-дополнение) в современном армянском языке.** – Статья посвящена одной из задач синтаксической типологии – изучению коммуникативно-мыслительных структур, с помощью которых в разных языках формируются мысли. Типология предложения строится с учётом того, каким образом синтаксический строй языка соотносится со структурно-смысловыми компонентами предложения (субъекта, объекта, действия и т. п.). В языках с более или менее свободным порядком слов (например, армянском и русском) взаиморасположение членов предложения может быть любым, т. е. используются все теоретически возможные модели словопорядка: SVO, SOV, OVS, OSV, VSO, VOS. При этом армянскому языку наиболее присущи модели SOV и SVO. В отношении армянского подтверждается положение Дж. Гринберга – когда доминирует модель VSO, язык использует предлоги, напротив, при доминировании SOV возможны только послелоги.

**HASMIK SAMSONYAN – *Typological Characteristics of Word Order –***

***Subject-Predicate-Object in Modern Armenian.*** – The article is devoted to one of the tasks of syntactic typology – the study of communicative and cognitive structures through which thoughts are formed in different languages. The typology of the sentence is constructed according to how and by what means the syntactic structure of the language presents the structural and semantic relations of its component parts (subject, object, action, etc). In languages with more or less free word order (such as Armenian, Russian ) the parts of the sentence can have any position, i.e. they are used in all six theoretically possible models of word order: SVO, SOV, OVS, OSV, VSO, VOS. But it should be noted that the frequency of the 6 models in each of the languages of the world varies considerably. SOV and SVO models are the most typical for the Armenian language. With respect to the Armenian language Joseph Greenberg's position is also supported, i.e. the languages in which VSO model dominates, prepositions are mostly used, and vice versa, the languages in which SOV model dominates, exceptionally postpositions are possible.